Արձանագրություն 2

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-24/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 29.10.2024թ. ժամը 12:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Ա. Ասրյան – ՀՀ ֆինանսների նախարարության քարտուղարության պետ,

Հանձնաժողովի անդամներ

Դ. Պետրոսյան – ՀՀ ֆինանսների նախարարության քարտուղարության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ,

Ն. Առաքելյան - ՀՀ ֆինանսների նախարարության քարտուղարության փաստաթղթաշրջանառության բաժնի գլխավոր մասնագետ,

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան – ՀՀ ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի պետ

1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

Հայտերի բացումը տեղի է ունեցել www.eauction.armeps.am կայքի միջոցով՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվան հաջորդ աշխատանքային օրը ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-24/3» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը	Տվյալները
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ ՊՈԱԿ	ՀՎՀՀ՝ 00078217, հասցե՝ Հր. Քոչար 5/2, էլ հասցե՝ fiverights.armenia@gmail.com, հեռ.՝ +37410225355
Ա/Ձ Կորյուն Ժամհարյան Սոսիկի	ՀՎՀՀ՝ 47896891, հասցե՝ ՀՀ, ք. Մասիս, 1 փ. 2 նրբ., տուն 7, էլ հասցե՝ kzhamharyan@mail.ru, հեռ.՝ +37498090109

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

1. Հաշվի առնելով, որ բացառությամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի մյուս մասնակիցների հայտերը մերժվում են՝ հանձնաժողովի կողմից գնահատվել է միայն առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված հայտը:

2. Հանձնաժողովն ընդունեց ի գիտություն, որ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ հրավերով սահմանված պահանջների նկատմամբ, մասնավորապես՝

- Հաշվի առնելով, որ պայմանագրի շրջանակներում կատարողը պետք է մատուցի առավելագույնը 750 մշտական պահպանության գործերի, 50 անձնակազմին վերաբերող գործերի և 3000 պահպանության ոչ ենթակա գործերի արխիվացման ծառայություններ՝ մասնակցի ներկայացրած ընդհանուր գնային առաջարկն ու ներկայացրած միավորի արժեքները /բազմապատկած գործերի քանակով/ չեն համապատասխանում իրար,
- Մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունում բացակայում է հավաստումը՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իրեն փոխկապակցված անձանց տվյալների համապատասխանության մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

1. «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-24/3» ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկված գները ներկայացվում են հավելված 1-ում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

5. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձնաժողովը որոշեց

1. Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը մեկ աշխատանքային օրով և ծանուցել ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ ՊՈԱԿ-ին՝ առաջարկելով հրավերով սահմանված ժամկետում շտկել առկա անհամապատասխանությունները՝ ներկայացնելով շտկված դիմում-հայտարարությունը (հավելված N 1) և գնային առաջարկը (հավելված 2):

1. Կորյուն Ժամհարյան Սոսիկի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

«ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-24/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել սույն թվականի հոկտեմբերի 31-ին ժամը 12:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Ասրյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Դ. Պետրոսյան

_____ Ն. Առաքելյան

Գնումները համակարգող՝ _____ Ա. Աղաբաբյան

Հավելված 1

Հ/Հ	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (ՀՀ դրամ)											
		ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ ՊՈԱԿ						Ա/Ձ Կորյուն Ժամհարյան Սոսիկի					
		Արժեք		ԱԱՀ		Ընդհանուր գին		Արժեք		ԱԱՀ		Ընդհանուր գին	
		Նախնական առաջարկ	Վերջին առաջարկ	Նախնական առաջարկ	Վերջին առաջարկ	Նախնական առաջարկ	Վերջին առաջարկ	Նախնական առաջարկ	Վերջին առաջարկ	Նախնական առաջարկ	Վերջին առաջարկ	Նախնական առաջարկ	Վերջին առաջարկ
1	արխիվացման ծառայություններ /գնման գին՝ 1,600,000 ՀՀ դրամ/	1,330,000	1,316,700	20%	20%	1,596,000	1,580,040	1,600,000	1,600,000	-	-	1,600,000	1,600,000